

Հարգելի գործընկերներ,

Երկար ժամանակ է, որ չենք շփվել միմյանց հետ, նամակագրական ժանրի «գրույցներ» չենք վարել և չենք փիլիսոփայել մարդկային էության շուրջ:

Վերհիշելով մեր նախորդ քննարկումները, կարելի էր համաձայնել ձեզ հետ. «... արդյոք ժամանակակից գոյության ողբերգականության ու հուսահատության պայմաններում մեզ անհրաժեշտ են «homo sapiens»-ի պատկերացումները»:

Իհարկե, դուք իրավացի եք, քանի որ ժամանակակից հասարակության պրագմատիկ բնույթի, տիրող ամենաթողության, ինչպես նաև մեր հայրենակիցների մեծամասնության կողմից բարեկեցիկ գոյության համար ուղիների հարատև փնտրտուքի պայմաններում, կարծես թե ավելորդ է դառնում մարդկային հոգու փրկության խնդիրը, «ես մարդ եմ» հասկացության վերականգնումը: Բայց «ես մարդ եմ» հասկացությունը ազատության համար ստեղծված մարդու անկապտելի հատկանիշն է: Բայց այդ «ազատության» նախնական էությունը ողբերգական հակասության մեջ է մտնում բնական դետերմինացիայի գործոնի (բարդույթ), հասարակության և կոլեկտիվի հետ, որոնք միտում ունեն անձնականը, անկրկնելին ենթարկելու ընդհանուր ստանդարտին: Եվ, վերջապես, ազատությունը հակասության մեջ է մտնում կրոնի հետ՝ պաշտոնական եկեղեցու, որը փոխջիջման մեջ է մտել «աշխարհի» հետ, ներքուստ բուրժուականացել (դարձել պրագմատիկ, ռացիոնալ) և կորցրել բարձր մարդասիրական հավատքի ոգին:

Տարօրինակ է, բայց եթե մեր թվականության միջին դարերում մարդկությունը հավատում էր Աստծո արքայությանը (անկախ դավանանքից), հումանիզմի դարաշրջանում առաջին անգամ գիտակցեց մարդկային ազատությունը, ապա պայմանավորված դասակարգային և սոցիալական հատկանիշներով դետերմինացված ուրբանիզացիայի գործընթացով և «մեխանիկական» քաղաքակրթության ստեղծումով, մարդկությունը, հիմնականում, շրջվեց երկնային արքայությունից՝ հանուն մարդկային թագավորության երազանքների, նաև «ազատությունից»՝ գերադասելով «կուշտ» կյանքի երազանքը :

Սակայն «մարդկային ազատության» հասկացության մեկնաբանությունը տարբեր մշակույթների, դավանանքների և էթիկաբարոյական նորմերի շրջանակներում միանշանակ չէ:

Սկսած 19-րդ դարի կեսերից, արդյունաբերական հեղափոխության, բնական և հումանիտար գիտությունների և սոցիալ-կենսադային հարաբերությունների ազդեցության տակ Կենտրոնական Եվրոպայի մի շարք առաջադեմ երկրներում հանրությունը փոխեց իր վերաբերմունքը Աստված-արարչի առաջնության նկատմամբ՝ հոգուտ պրագմատիզմի և ռացիոնալիզմի:

Օրինակ, արևմտյան փիլիսոփայական գրականության մեջ «ազատություն» հասկացությունը հիմնականում մեկնաբանվում է հետևյալ կերպ.

• Ռբական ազատություն, որը բնութագրվում է որպես հնարավորությունների և ռեսուրսների առկայություն իր սեփական կարողության իրականացման համար («Ես եմ իմ տերը» կարգախոսով)։

• Բացասական ազատությունը բնութագրվում է արտաքին խոչընդոտներին դիմակայելու կարողությամբ («Ես ստրուկ չեմ» կարգախոսով)։

Վերոնշյալ երկու սահմանումներից հետևում է, որ մարդը «հնարավորությունների էակ» է, և նրա սուբյեկտիվ կողմնորոշումներից է կախված այդ հնարավորությունների օգտագործումը իր սահմանած նպատակներին հասնելու համար։

Ինչպես հասկանում եք, «ազատություն» հասկացության երկու մեկնաբանություններն էլ իրենց բովանդակային իմաստով կրում են անհատականության գաղափարը։ Սակայն, յուրաքանչյուր մարդ իր էությամբ (հոգեֆիզիոլոգիական անհատականություն), լինելով բնության միակ և անկրկնելի ստեղծագործությունը, նաև հասարակական էակ է և ունի որոշակի պարտականություններ մարդկային հանրության անդամների առջև։

Մարդկային հանրությունը՝ արտաքնապես կազմակերպված անձանց հանրագումարի ոչ մեխանիկական հանրություն է։

Մարդկային հանրությունը օրգանական կազմավորում է՝ միավորված գոյության շահերի ընդհանրությամբ և համատեղ ճակատագրի հանդեպ կամքով։ Օրգանական հանրությունների այդպիսի դասական օրինակներ են ընտանիքը, հարազատները, կլանը, հայրենակցությունը և այլն։ Գոյություն ունեն ծառայողական հանրություններ, ինչպիսիք են ձեռնարկությունները, բրիգադները, բանակը և այլն։ Սոցիալական կազմակերպությունների ոլորտում միշտ ենթադրվում է սոցիալական օրգանիզմների գոյություն, ինչպիսիք են ժողովուրդը, ազգը, պետությունը և այլն։

Սակայն ամեն ինչի հիմքում անհատն է։ Անհատը, ինչպես անհատականության, այնպես էլ մարդկային հանրության լիիրավ անդամակցության մեջ, տարատեսակ արժեքների կրող է։

Անհատի հոգեկան հատկությունները (երևակայություն և կամք) որոշում են նրա գոյության նպատակը և արժեքները։ Կամքն ուղղված է նպատակին, իսկ երևակայությունը՝ արժեքներին։

Անհատին բնորոշ են հիերարխիայի արժեքները։ Փաստորեն, յուրաքանչյուր մարդ իր վարքագծում ղեկավարվում է արժեքների սեփական, սուբյեկտիվ հիերարխիայով։ Եվ տվյալ մարդու վարքագծի իմաստը կարելի է հասկանալ միայն հասկանալով այն արժեքների հիերարխիան, որոնցով նա ղեկավարվում է։

Միայն արևելյան փիլիսոփայական միտքը, որի վառ ներկայացուցիչներից էին սլավոնաֆիլերը, գերմանական իդեալիստական փիլիսոփայության հիման վրա, եկավ այն եզրակացության, որ հասարակության մեջ հոգեբարոյական նորմերի նախնական զարգացումը պետք է հիմնված լինի նրա կրոնական ինքնագիտացության բարձրացման վրա այնպես, որպեսզի հետագայում

գարգացնի այդ սկզբունքները համամարդկային արժեքների շրջանակներում, արևմուտքից վերցնելով նրա բոլոր դրական ձեռքբերումները:

Նման մոտեցման հիմնադիրներն էին ռուս մտածողներ Ի.Վ. Կիրենսկին (1806-1856 թթ.) և Ա.Ե.Խոմյակովը (1804-1860 թթ.): Նրանց ուսմունքի հիմնական նպատակը՝ Արևմուտքում մարդանհատի դերի հզորացման պայմաններում ռուսական ինքնության պահպանումն էր:

Ռուսական փիլիսոփայական մտքի զարգացման գործում առանձնահատուկ տեղ է գրավում Վ.Ս. Սոլովյովը (1853-1900 թթ.): Նա կրոնական փիլիսոփա էր և աստվածաբան: Սոլովյովի փիլիսոփայական մտքի հիմնական ուղղությունը եղել է կաթոլիկական եկեղեցու հովանու ներքո քրիստոնեական հավատքի բոլոր ուղղությունների վերամիավորման գաղափարի աստվածաբանական հիմնավորումը, որին հաջորդելու էր պետության ենթարկումը եկեղեցուն:

«Արևմուտքի գայթակղությունը, - ասում էր Սոլովյովը – «անաստված մարդն է», Արևելքի գայթակղությունը՝ «անմարդկային աստվածությունը»:

«Արևմուտքը ստեղծել է մշակույթ, սակայն խեղաթյուրել է Քրիստոսի ճշմարտությունը: Արևելքը պահպանել է աստվածային ճշմարտության մաքրությունը, սակայն չի ստեղծել մշակույթ»:

20-րդ դարի սկզբին փիլիսոփայական ուսմունքները Ռուսաստանում կարելի է վերագրել ռուսական կրոնափիլիսոփայական Վերածննդին, որի ժամանակաշրջանը համընկավ ռուսական պոեզիայի Արծաթե դարին: Այդ շրջանի փիլիսոփաների՝ Ն.Օ. Լոսկու, Հ.Ա. Բերդյասի, Ս.Լ. Ֆրանկի, Պ.Ա. Ֆլորենսկու, Ս.Ն. Բուլգակովի (Ա. Ֆլորենսկին և Ս.Ն. Բուլգակովը քահանաներ էին) անունները մեծ հեղինակություն էին վայելում ինչպես Ռուսաստանում, այնպես էլ Արևմուտքում:

«Մարդկային ազատության» հասկացության զարգացման մեջ առանձնահատուկ տեղ են գրավում այնպիսի փիլիսոփաների աշխատանքները, ինչպիսիք են Ս.Ա. Լևիցկու (1908-1983թթ.) «Ազատության ողբերգությունը» և Ն.Ա. Բերդյասի (1874-1948 թթ.) «Մարդու ճակատագիրը»:

Այսպես, ըստ Ս.Ա.Լևիցկու. «Իրական ազատությունը ոչ թե հնարավորությունների անպատասխանատու խաղ է, այլ սեփական անկրկնելի հնարավորությունների իրականացումը՝ պատասխանատվության բեռով»:

Այս սահմանունից (ի դեպ, խորը և ունիվերսալ) բխում է շատ կարևոր հետևություն, այն է՝ ազատությունը ծանրաբեռնված է մարդու պատասխանատվությամբ իր, հասարակության և բնության առջև: Այսպիսով, կանխորոշված է ազատության ողբերգականությունը՝ պայմանավորված մարդու էթիկական որակներով:

Ն.Ա.Բերդյասն իր «Մարդու ճակատագիրը» գրքում տարբերում է էթիկայի երեք տեսակ. իրավունքի էթիկա, հատուցման էթիկա և ստեղծագործական էթիկա:

Իրավունքի էթիկան բարոյական գիտակցության ամենացածր, սակայն անհրաժեշտ աստիճանն է: Այն ուղղված է ոչ այնքան անհատին, որքան մարդկային հանրությանը: Այն բաղկացած է արգելքների կողեքսներից՝ «տաբու» և «վետո»: Դա «սոցիալական առօրեականության» էթիկան է, այն հանգեցնում է փարիսեցիության, կեղծավորության և կեղծ բարեպաշտության:

Հատուցման էթիկան էթիկայի բարձրագույն աստիճանն է: Այն սիրո և կարեկցանքի էթիկան է: Սակայն հատուցման էթիկան ունի նաև իր վտանգները. այն հեշտությամբ վերաճում է եսասիրության, սեփական հոգու և մարմնի փրկության բացառիկ խնամքի: Այդ կապակցությամբ հատուցման էթիկան հարկավոր է համալրել «ստեղծագործական էթիկայով»: Արարիչը «մոռանում» է իր մասին և հետաքրքրված է իր ստեղծագործության առարկաներով (արարքներով): Որպես հետևանք՝ Ն.Ա. Բերդյասը տարբերում է ազատության երեք տեսակ. իռացիոնալ, ռացիոնալ և գերռացիոնալ:

Ձեր քննարկմանը ներկայացնելով դեպի «մարդկային ազատության» փիլիսոփայական հասկացության այս կարճ էքսկուրսը, ես նպատակ էի հետապնդում մեզ՝ 21-րդ դարի ներկայացուցիչներին համար ցույց տալ այդ հասկացության ամբողջ խորությունն ու արժեքը:

Համապատասխան գրականությանը ծանոթանալուց հետո, մենք ձեզ հետ միասին կգանք այն եզրակացության, որ «այդ քաղցր բառը՝ ազատությունը» իր մեջ կրում է անհատի խոր բարոյահոգեբանական և էթիկական պարտականությունները մարդկային հանրության առջև:

Լևոն Ներսիսյան

Սախարովի կենտրոնի տնօրեն